

ՀՍԽՀ ՖԺԿ ՊԵՏ-ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁՈՒԹՅՈՒՆ

Հ Ր Ա Հ Ա Ն Գ


№ 326 Կ.

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀԱՎԱԳՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ

368

Խ-11

1936



ՀՐԱՀԱՆԳ № 326

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱԿՏԵՐ ԿԱԶՄԵԼՈՒ ՅԵՎ ՎՆԱՍՆԵՐԸ ՀԱՏՈՒՑԵԼՈՒ ԿԱՐԳԸ

Անասունների պարտադիր կոպարային ապահովագրման կարգով ֆինանսների լուծարքը պետք է կատարել և ապահովագրական վարձատրություն վճարել այս հրահանգի հիման վրա:

Բոլոր մինչ այժմ հրատարակված հրահանգներն ու կարգադրությունները վերացվում են:

Ա. ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

1. ՎՈՐ ԿԵՆԴԱՆԻՆԵՐՆ ԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ ՅԵՎ ՎՈՐՈՆՔ ՉԵՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՎՈՒՄ

§ 1. Պարտադիր կոպարային ապահովագրման կարգով կոլտնտեսություններում (գյուղատնտեսական կոմունաններում, գյուղատնտեսական արտելներում և միատեղ հող մշակով ընկերություններում) ապահովագրվում են ձիերը, ուղտերը, ջորիները, ավանակները, յեղջերուները, խոշոր յեղջյուրավոր անասունները, վոշխարները, այծերը և խոզերը, իսկ կոլտնտեսականների մոտ (տնտեսության վոշ հանրայնացրած մասի նկատմամբ), աշխատավոր մենատնտեսություններում, բանվորների, ծուռայողների, տնայնագործների, արհեստավորների և այլ աշխատավորների, նույն թվում և ոտաբանական քաղաքացիների մոտ ապահովագրվում են

Սրբ. Ա. ՀԱՆՎԵՐԳՅԱՆ

ԳՅՈՒՂՀՐԱՍԻ ՏՊԱՐԱՆ

Պատվեր 258

Դրավիտ 2097 Տիրաժ 2000

ձիերը ուղտերը, ջորիներն, ավանակներն, յեղջերուները, խոզոր յեղջուրավոր անասունները և վոչխարների առանձին ցեղերը:

§ 2. Պարագրաֆ առաջինում նշված անասուններն ապահովագրվում են ապահովագրական հասակի հասնելուց հետո և այն նորմաներով (ապահովագրական գումարներով), վորոնք ցույց են տրվում պարտադիր կոպարային ապահովագրման վերաբերյալ յուրաքանչյուր տարի հրատարակվող վորոշումներում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Կոլտնտեսությունները կարող են իրենց պատկանող անասուններն ապահովագրել մինչև նրանց լրիվ արժեքն ըստ գույքացուցակի, այլև ինվենտար արժեքից ավելի բարձր, ապահովագրական մարմինների գնահատությունով: Տեղական անասուններն, ինչպես և լավացրած ցեղի անասուններն ապահովագրվում են իրենց լրիվ արժեքով:

§ 3. Չեն ապահովագրվում՝
ա) ապահովագրական հասակի չհասած անասունները:

բ) Այն անասունները, վորոնք պատկանում են անհատական կարգով գյուղհարկ վճարող կուլակային տնտեսություններին, № 3 ցուցակով յեկամտային հարկ վճարող անաշխատ տարրերի տնտեսություններին, ըստ իրենց սոցիալական դրություն, ծագման կամ անցյալ զբաղմունքների ընտրողական իրավունքից զրկված անձանց:

§ 4. Պարտադիր կոպարային ապահովագրման յենթակա անասունները տնտեսություն կողմից պետք է ցուցակագրվեն անասունների պարտադիր կոպարային ապահովագրման կարգով կառավարող տարեկան ցուցակագրության ժամանակ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Ապահովագրական հասակի հասած ինչպես և ցուցակագրումից հետո տնտեսություն մեջ մտած անասուններն ապահովագրված են համարվում ապահովագրական հասակի հասնելու կամ տվյալ տնտեսություն մեջ մտնելու պահից, իսկ կոլտնտեսություններում գույքացուցակում գրանցելու պահից:

II. ՎՈՐ ԴԵՊՔԵՐՈՒՄ Ե ՊԵՏԱՊՆ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՍՐՈՒԹՅՈՒՆ ՏԱԼԻՍ

§ 5. Պետական ապահովագրական վարձատրություն ապահովագրված և ընկած անասունի տիրոջը ապրիս և այն դեպքում միայն, յեթե այդ կորուստը տեղի յե ունեցել անասնատիրոջ կամքից անկախ պատճառներով, այն ե՝ հիվանդություն, բնական մահվան, դժբախտ պատահարի, կայծակահարում, հեղեղում և այլն, յերբ ապահովագրված անասունն անասնաբուժի կամ անասնաբուժակի կարգադրությամբ մորթվել և վարակիչ հիվանդություններ վորոշելու կամ կանխելու համար (տես § 6 պրակ «դ» ծանոթությունը): Նույնպես ապահովագրական վարձատրությունը տրվում է այն կոլտնտեսություններին, կոլտնտեսականներին ու մենատնտեսներին, վորոնք ակտիվ պայքար են մղում կուլակություն դեմ, յեթե նրանց անասուններն դասակարգային վրեժխնդրության զոհ են գնացել:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Դասակարգային վրեժխնդրության հետևանքով ընկած անասուններին ֆուսը հատուցվում է լրիվ արժողությամբ: Տվյալ դեպքում դասակարգային վրեժխնդրության ակտը լինելու կամ չլինելու հանգամանքը շրջանային ապահովագրական հանձնաժողովին վորոշում է (տես § 18) անասունի անկման հետ կապված բոլոր

հանգամանքները հետադոտելուց հետո, հանձնաժողովը վորոշում է նաև ընկած անասունի արժեքը:

111. ՎՈՐ ԴԵՊԲԵՐՈՒՄ ՊԵՏԱՊՆ ԱՊԱՀՈՎԱԴՐԱԿԱՆ
ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ԶԻ ՏԱԼԻՍ

§ 6. Պետական ապահովագրական վարձատրությունն ապահովագրված և ընկած անասունի տիրոջը չի տալիս այն դեպքում, յեթե անասունի անկման մեղքը նրա տիրոջն է, այսինքն, յեթե այդ անկումն անասնատիրոջ սխալ գործողության կամ նրա կողմից անհրաժեշտ միջոցներ ձեռք չառնելու հետևանք է, այն է՝

ա) յեթե անասունի անկման պատճառը յեղել է այնպիսի հիվանդություն կամ դժբախտ պատահար, վորն առաջ է յեկել ակնհայտ անտնտեսվարության հետևանքով, որինսկ՝ անասունի ուժասպառ լինելն անբավարար կերակրելու հողի վրա, կեղտոտ կեր տալը, սխալ լծելը, տեղական պայմաններին անհամապատասխան շենքում անասուն պահելը, հիվանդ անասունին վատ խնամելն, անասունի հիվանդության մասին անասնաբուժին (անասնաբուժակին) կամ գյուղխորհրդին չհայտնելը և այլն:

բ) Յեթե անասունն ընկել է ծայրահեղ շահագործման կամ ֆուսարար վերաբերմունքի հետևանքով (անասունին ուժից վեր աշխատեցնելը, ձեծելը, սաստիկ քշելը, ֆուսատու կեր տալը, տաքացած անասունին սառը ջուր տալը և այլն):

գ) Յեթե անասնաբուժը կամ անասնաբուժակը կպարզի, վոր ընկած անասունը վարակվել է շորհիվ այն հանգամանքի, վոր նրա տերը չի կատարել վարակիչ հիվանդությունների դեմ պայքարելու վերաբեր-

յալ գոյություն ունեցող պարտադիր վորոշումները և անասնաբուժական—սանիտարական կանոնները:

Այն դեպքում, յեթե գյուղական կամ շրջանային հանձնաժողովն ընկած անասունների մասին ակտ կազմելիս, ինչպես է պետապի տեսուչը կամ շրջանային ապահովագրական հանձնաժողովն այդ ակտը ստուգելիս և հաստատելիս կհայտաբերեն, վոր կոլխոզի անասունի անկումն անտնտեսվարության, ֆուսարար գործողությունների կամ չարաշահ շահագործության հետևանքով է առաջ յեկել, ապա հանձնաժողովը հատուկ վորոշում է կայացնում այդ առթիվ և հայտնում է դատախազական հսկողությանը՝ հանցավորներին պատասխանատվության յենթարկելու համար:

§ 7. Անկախ անասունի անկման պատճառներից ֆուսը չի հատուցվում՝

ա) անհատական կարգով գյուղհարկ վճարող կուլակային տնտեսություններին.

բ) № 3 ցուցակով յեկամային հարկ վճարող անաշխատ տարրերի տնտեսություններին.

գ) ըստ իրենց սոցիալական դրության, ծագման անցյալ զբաղմունքների ընտրողական իրավունքներից զրկված անձանց:

§ 8. Նմանապես պետապի ապահովագրական վարձատրություն չի տալիս ապահովագրված անասունների այն տերերին, վորոնք չեն կատարել հետևյալ նրանց համար պարտադիր կանոններն, այսինքն՝

ա) յեթե անասունի անկման վերաբերյալ ակտ կազմելիս կհայտաբերվի, վոր անասուններն պարտադիր կոպարային ապահովագրական կարգով ցուցակագրելու ժամանակ, տվյալ տնտեսության մեջ թագցված են յեղել ցուցակագրումից (ապահովագրումից) տվյալ տեսակի անասունները.

բ) յեթե կոլտնտեսականներն ու մենատնտեսներն անասունի անկման մասին 24 ժամվա ընթացքում չեն հայտնել գյուղխորհրդին, իսկ կոլտնտեսությունները, գյուղխորհրդին և պետապի շրջանային տեսչին: ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այս ժամկետն անպայման պետք է պահպանել, յեթե վորեն հատուկ պատճառներ չեն խանգարի դրան:

գ) յեթե ըստ հաստատված ակտի ապահովագրական վարձատրություն տալու վերաբերյալ պահանջը չի առաջադրվի ակտը հաստատվելուց վեց ամսվա ընթացքում:

դ) այն դեպքում, յերբ անասունը մորթվել է տնտեսական նկատառումներով կամ դժբախտ պատահարների հետևանքով՝ մսի համար, կամ յերբ վարակիչ հիվանդություններ վորոշելու կամ կանխելու նպատակով անասնաբուժական հսկողություն կարգադրություններ սպանված (մորթված) անասունի միսը գործածության համար պիտանի չի ճանաչվել (տես ծանոթություն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Այն դեպքերում, յերբ անասնաբուժական հսկողության կարգադրություններ կամ դժբախտ պատահարի հետևանքով սպանվել է (մորթվել է) կոլտնտեսության մեջ ազնվացեղ կամ լավացրած ցեղի անասուն և նրա միսը գործածության համար պիտանի չի ճանաչվել, ապահովագրական վարձատրություն տրվում է ապահովագրական գումարի չափով, հանելով մսի արժեքն: Ընդվորում, յեթե կոլտնտեսությունն ապացույցներ և ներկայացնում, վոր միսը նա կոնվենցիոն գներով է իրացրել, մսի արժեքը վորոշվում է կոնվենցիոն գների հիման վրա, իսկ մնացած դեպքերում, կոլտնտեսական շուկայի գներով:

Բ. ՎՆԱՍՆԵՐԻ ԼՈՒՍԱՐՔԸ

IV. ՈՎ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ Ե ԿԱԶՄՈՒՄ ԱԿՏԸ ԱՆԱՍՈՒՆԻ ԱՆԿՄԱՆ ՄԱՍԻՆ

§ 9. Նայած թե անասունների անկման ինչպիսի դեպքեր են լինում՝ յեղակի թե հաճախակի և մասսայական դեպքեր, ակտը կազմում են՝

ա) Յեղակի դեպքերում՝ գյուղական հանձնաժողովը հետևյալ կազմով՝

1) Գյուղխորհրդի նախագահը կամ նրա տեղակալը (հանձնաժողովի նախագահ):

2) Գյուղխորհրդի անդամը, վորին նշանակում է գյուղխորհուրդը շրջանային ապահովագրական տեսչի համաձայնությամբ:

3) Կոլտնտեսության նախագահը կամ վարչության այդ առթիվ հատկապես լիազորված անդամը, յեթե զնապը կոլտնտեսությունն է կրել:

4) Անասնաբուժին (անասնաբուժակն) այն դեպքում, յեթե այդպիսին գյուղխորհրդում գոյություն ունի:

5) Միլիցիոներն, յեթե այդպիսին տվյալ գյուղում գոյություն ունի: Գյուղական հանձնաժողովն ակտեր կարող է կազմել վոչ պակաս քան յերեք անդամի մասնակցությամբ:

բ) Անասունների հաճախակի կամ մասսայական անկման դեպքերում շրջանային հանձնաժողովն իր լրիվ կազմով (տես § 18) կամ նրա հանձնարարություններ, մի քանի անդամները, քայքայ Գետապի շրջանային տեսչի պարտադիր մասնակցությամբ, մասնակից անելով նաև անասնաբուժին (անասնաբուժակն):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1. Ակտը պետք է ստորագրեն գյուղական կամ շրջանային ապահովագրական հանձնաժողովի բոլոր անդամները և ընկած անասունի տերը:

2. Տվյալ գյուղական կամ շրջանային հանձնաժողովը պատասխանատու չէ իր կազմած ակտի ճշտության համար, իսկ կեղծ կամ խրենց մեջ սուտ տեղեկություններ պարունակող ակտեր կազմելու համար— հանցավորները պատասխանատվության են յենթարկվում հանրային գույքի պաշտպանության վերաբերյալ որենքի համաձայն:

§ 10. Անասունների անկման ակտերը կազմելիս անպայման պետք է ներկա լինի անասնատերը, կուտնտեսության կամ հասարակական այլ կազմակերպության մեջ— նրա վարչության նախագահը կամ հատուկ լիազորված անդամը, իսկ կուտնտեսականի կամ մենատնտեսի մոտ— տնտեսության գլուխը կամ նրա ընտանիքի անդամը:

§ 11. Հանձնաժողովներն պարտավոր են մեկնել անասունների անկման վայրը՝ պարզելու համար դեպքի պատճառներն ու կազմելու համապատասխան ակտեր. վորպես կանոն, վոչ ուշ, քան ընկած անասունի տիրոջ հայտարարությունը ստանալուց 24 ժամվա ընթացքում՝ առաջին հերթին նրանք պետք է մեկնեն կուտնտեսությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— 1 Յեթե անասնաբուժը կամ անասնաբուժակը կամ ել գյուղխորհրդի ներկայացուցիչը բացահայտ հատկանիշների հիման վրա կապացուցեն, վոր անասունը վարակիչ հիվանդությունից է ընկել, ապա անասնատերը վոչ միայն կարող է, այլև պարտավոր է ժամանակին հեռացնել գիակը վարակիչ հիվան-

դուծյունների դեմ պայքարի վերաբերյալ գործող պարտադիր վորոշումների համաձայն և տեղական իշխանության (գյուղխորհրդի, շրջգործկոմի և այլն) ներկայացուցչի ներկայությամբ, իսկ յեթե վերջինը մասնակցել չի կարող՝ յերկու վկաների ներկայությամբ:

2. Յեթե գյուղական և շրջանային հանձնաժողովն ակտ կազմելու համար անասունի անկման վայրը չի մեկնի, ապա անասունի դիակը չսպասելով հանձնաժողովին, բայց տեղական իշխանության ներկայացուցչի ներկայությամբ պետք է հանձնել ճարպիկներ մշակող կազմակերպություններին կամ թաղել այս առթիվ գոյություն ունեցող պարտադիր վորոշումների համաձայն:

§ 12. Անասունների անկման ակտեր կազմելիս հանձնաժողովներն անպայման պետք է՝ ա) ունենան իրենց ձեռքի տակ ներկա հրահանգը և այն դեպքում յեթե հանձնաժողովի վորեն անդամ վերջինին տեղյակ չի, ապա մինչև աշխատանք սկսելը կարդալ. բ) բոլոր միջոցները գործադրել (անասնատիրոջ, վկաների հարցուփորձը, դիակնությունը, փաստաթղթերի քննարկումը, տեղեկանքներ պահանջելը և այլն), պարզելու համար անասունի անկման իսկական պատճառներն ու նրա արժեքը. գ) անասունի անկման պատճառները պարզելուց հետո, ներկա հրահանգի համաձայն, յեզրակացություն տալ այն մասին, թե արդյոք անհրաժեշտ է տվյալ դեպքում ապահովագրական վարձատրություն տալ, թե պետք է մերժել:

§ 13. Յեթե ապահովագրված անասունի դիակը չի կարելի ներկայացնել հանձնաժողովին գնահատելու համար (յեթե անասունն ընկել է տվյալ շրջանից դուրս, խեղդվել է գետում, սատկել է ձորում, կամ սպան-

ված—մորթված և անասնաբուժական հակողության կարգադրությամբ և այլն), ապա ակտն կազմվում և ապահովագրողի առաջադրած տեղեկանքների և վկայականների հիման վրա կամ վկաներ-ակնատեսների հարցափորձությամբ:

§ 14. Ակտը պետք և կազմված լինի վոչ ուշ քան հայտարարությունը ստանալու պահից 24 ժամվա ընթացքում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Հյուսիսային յերկրում, Սուրճանի մարզում, Ուրալի մարզում, Արևելյան և Արևմտյան Սիբիրի յերկրներում, Հեռավոր Արևելքի յերկրում, Բուրյատ-Մոնղոլյան, Յալթու, Ղաղախստանի, Ղարա—Կալպսկի և Կիր-գիզի Ա.Ս.Ս.Հ., Ուզբ.-Տաճիկ. և Թուրքմենստանի ի.Ս.Հ. ակտը պետք և կազմված լինի վոչ ուշ քան հայտարարությունը ստանալու պահից յերկու օրվա ընթացքում:

§ 15. Վորպես կանոն, ակտը կազմվում և յուրաքանչյուր ընկած անասունի համար առանձին: Բայց այն դեպքում, յերբ կոլտնտեսության կամ հանրայնացված սեկտորի վորևե ալ տնտեսության մեջ, միաժամանակ միևնույն պատճառներից միանգամից մի քանի անասուն և ընկնում (որինակ՝ այլվում և մի քանի ձի հրդեհի ժամանակ կամ սառչում ճանապարհին մի քանի վոչխար և այլն) ակտը, վորպես բացառություն կարելի չե կազմել ընդհանուր, նույն տեսակի բոլոր անասունների համար, ընդվորում այս դեպքում, ակտին պետք և կցված լինի այն բոլոր ընկած անասունների ցուցակը, վորոնց մասին տվյալ ակտն և կազմված, ցույց տալով դրանց ապահովագրման գումարները և անկման օրվա արժեքը՝ հանձնաժողովի գնահատությամբ:

§ 16. Կազմված ակտերը գրանցվում են գյուղ-

խորհրդի հատուկ մատյանում և ապա անմիջորեն ներկայացվում Պետապի շրջանային տեսչին:

Ակտը տուժողի ձեռքում թողնելը կամ նրա միջոցով Պետապի շրջանային տեսչին հանձնելը չի թույլատրվում:

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՆԿՄԱՆ ԱԿՏԵՐԻ ՍՏՈՒԳՈՒՄՆ ՈՒ ՀԱՍՏԱՏՈՒՄՆ, ԱՅԼ ՅԵՎ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՎՃԱՐԵԼՈՒ ԿԱՐԳԸ

§ 17. Պետապի շրջանային տեսուչը գյուղխորհուրդներից անասունների անկման վերաբերյալ ակտեր ստանալուց հետո, պարտավոր է՝ յուրաքանչյուր ակտն ըստ ստացման կարգի գրանցել մատյանում, լրացնելով վերջինի բոլոր սյուսյակները և ստուգել ակտերի ճիշտ կազմած լինելու հանգամանքը, ընդվորում՝

ա) ճիշտ կազմված և կասկած առաջ չբերող ակտերի վրա համապատասխան նշում անել ու ներկայացնել շրջանային ապահովագրական հանձնաժողովի հաստատությանը:

բ) Այն ակտերը, վորոնք յենթակա յեն ուղղման կամ լրացման, հետ ուղարկել գյուղխորհրդին:

գ) Այն ակտերը, վորոնք կասկած են ներշնչում, թե դրանց կազմող գյուղական հանձնաժողովների գործողությունների նկատմամբ և թե ակտում նշված անասունի անկման պատճառների նկատմամբ՝ ստուգել անձամբ մեկնելով այն տնտեսությունը, վորին պատկանում և ընկած անասունը:

§ 18. Ապահովագրական վարձատրության համար ակտերը հաստատում են Պետապի շրջանային տեսչի գեկուցմամբ շրջանային ապահովագրական հան-

ձնաժողովի կողմից հետևյալ կազմով՝ շրջգործկոմի նախագահի տեղակալը (հանձնաժողովի նախագահը), Պետապի շրջնային տեսուչը, շրջհողաբանի վարիչը, գյուղատնտեսական միջերումների շրջնային լիազորը, Ն.Գ.Ժ.Կ. ներկայացուցիչը և միլիցիայի շրջնային վարչության պետը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Պետապի շրջնային տեսուչը, շրջնային ապահովագրական հանձնաժողովի վորոշմանը համաձայն չլինելու դեպքում, պարտավոր է բողոքարկել այն Պետապի յերկրային, ժաղպային կամ հանրապետական (ինքնավար հանր.) լիազորի վարչությանը և դադարեցնել վնասների հատուցումը:

§ 19. Շրջնային ապահովագրական հանձնաժողովն ակտերը պետք է քննարկի և հաստատի կամ ապահովագրական վարձատրություն չտալու վերաբերյալ վորոշումներ կայացնի վոչ ուշ, քանակ տերը հանձնաժողովում ստանալու պահից տաս որվա ընթացքում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Շրջնային ապահովագրական հանձնաժողովի վորոշման մասին պետք է հայտնել առևտր տնտեսությանը վոչ ուշ, քան յերեք որվա ընթացքում:

§ 20. Ապահովագրության վարձատրությունն ակտերը հաստատվելուց հետո պետք է արվեն կոլտնտեսություններին վոչ ուշ, քան հինգ որվա ընթացքում, կոլտնտեսականներին վոչ ուշ, քան 10 որվա ընթացքում և աշխատավոր մենատնտեսներին վոչ ուշ, քան 15 որվա ընթացքում:

§ 21. Պարտադիր կոպարային ապահովագրության կարգով ապահովագրված անասունների նկատմամբ ապահովագրական վարձատրություն վճարվում է կոպարային նորմայի չափով, իսկ ըստ գույքացու-

յակի արժեքի կամ ըստ հատուկ գնահատության ապահովագրվածների նկատմամբ՝ այն գումարի չափով, վորով նրանք ապահովագրված են: Դիակի և կաշվի համար վոչ մի պահում ապահովագրական վճարումից չի կատարվում:

VII. Բ Ո Ղ Ո Ք Ն Ե Ր

§. 22. Պետական ապահովագրման այլև վճարների լուծարքման ու վճարման գծով գյուղխորհուրդներին կողմից թույլ տված սխալ գործողություններին վերաբերյալ բողոքներ ապահովագրվողները՝ տալիս են գրավոր կերպով շրջնային ապահովագրական հանձնաժողովին:

Շրջնային ապահովագրական տեսչություններին և շրջնային ապահովագրական հանձնաժողովներին սխալ գործողությունների վերաբերյալ բողոքները տրվում են Պետապի յերկրային (ժաղպային) վարչությանը կամ Պետապի ինքնավար հանրապետություններում ունեցած վարչությանը՝ ըստ պատկանելության:

§ 23. Յուրաքանչյուր ստացված բողոք պետք է քննության առնվի վոչ ուշ, քան ստացման պահից 10 որվա ընթացքում:

Շրջնային ֆինանսական բաժինների ղեկավարները պետք է հսկողություն ունենան բողոքների քննության նշված ժամկետը պահպանելու վրա:



ՀՀ Ազգային գրադարան



NL0218903

387

43. 804

